


ՏՆՕՐԷՆ-ՆԱՄԱԳԻՐ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ քրոսիւն
պէտք է ուղղել առ

ՆԱՄԱԳԻՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ՄԱՐԿԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղի. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տեղի. Թրակի 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծովափ խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՏԻՈՒՐ ԴԱՍԵՐ

Մէրսինի միջադէպը, — որ փակուեցաւ
ոչ միայն աւստրիական դրօշին ընծայուած
պատիւներով, այլեւ Բոսնիայի երկաթուղիներ-
ընդհանուր քանի մը միլիոն ֆրանք պահանջ-
քի մը հատուցման ապահովութեամբ, — ա-
խորժաբեր եղած ըլլալ կը թուի միւս տէրու-
թիւններու քիմքին, որոնք «հին տեսութիւններ
պրպտելու կեղծքն» ու դրամական խնդիրներ
կը հանեն մէջտեղ:

Նորագոյնը ու անակնկալը, այս պահան-
ջումներուն, հետեւեալն է որ մասնաւորապէս
կը հետաքրքրէ մեզ՝ հայերս, ու հետաքրքրե-
լէ աւելի կը յուզէ:

«Դեսպանները, կըսէ Պոլսէն Ռիւթէրի
«հեռագիր մը, կը պնդեն Դրան մօտ որպէս»
«զի Անատոլիոյ ու Կ. Պոլսոյ չփոխութիւննե-
«րու միջոցին իրենց հպատակներուն կրած
«ֆլանները հատուցուին»:

Անճախարութիւն կամ ետախարութիւն
բառը շատ տկար կերպով կը համապատաս-
խանէ ֆրանսերէն égoïsme բառին զոր իր
ծայրագոյն առումով գործածելու ճիշդ տեղն
է: Զենք գիտեր թէ քանի՞ օտար հպատակ
կեանքը կամ ինչքը վրայ տուաւ 1896ի ջար-
դերու եւ կողոպուտներու միջոցին որ մեծ տէ-
րութեանց ներկայացուցիչներն, ի վերջ 1897ի,
կը միաբանին յանկարծ ատոնց փոխարինու-
թիւնը պահանջելու, անգիտանալ ձեւանալով
թէ իրենց մասի վրայ համուռոջ պաշտպան-
եալներուն հետ հարկը հազար հայեր խող-
խողեցան, թողունք նիւթական ֆլանսը ու
աւերումը որ անհաշուելի են:

Քրիստոնեայ եւրոպայի cynismeը, ու
գիւմարտութեան անխիղճ շահասիրութիւնը
քիչ անգամ այնքան անպատկառ ու շահա-
խնդիր կերպով երեւան եկած են որքան այս
պարագային մէջ:

Խեղճ հայ ազգին վերջին տարիներս կը-
րած հալածանքներուն ու տառապանքներուն
անկարելի հանգիստտես ըլլալէ ետք, — մոռ-
նալով մինչեւ իսկ որ իրենց պղտորանական
խոստումները, խորհրդարանական ճառերը,
նախարարութիւններու բերան եղող թերթե-
րուն յօդուածները գոնէ անուղղակի պատ-
ճառ ու քաջալերող եղան շարժումին չի կա-
սելուն զոր ընդհակառակն արծարծեցին, —
հիմակ ալ եւեր թուրք կառավարութեան

դրամ կը պահանջեն «իրենցներուն» համար:
Անհաւանական չէ որ յաջողին քիչ մը բան
բացուել: Որոհեց արեւան գինը պիտի ըլլայ
ուսկայն քանի մը հարկը հազար ոսկին, օրի-
նակի համար, զոր առնեն, եթէ ոչ մեր նա-
հատակ եղբայրներուն ու քոյրերուն: Գեր-
մանական հպատակ հրէի մը քիթը արիւնք
է եղեր, կամ բրիտանական հպատակի մը
խանութին փեղկը կտորեր է, կամ ֆրան-
սացիի մը ոտքը ճմուռեր է փախուստի միջո-
ցին: աս ի՞նչ գուրգուրանք, ի՞նչ հոգածու-
թիւն:

Սգաւոր, վշտաբեկ ու աղքատիկ հայը,
որ դրամական հատուցումի գաղափարը վայր-
կեան մը իսկ չանցուց ու չանցունք միտքէն,
աշխարհի տէր եղող եւրոպացիներուն այս ըն-
չաքաղցութիւնը տեսնելով՝ վեհանճն արհա-
մարհանք մը միայն կունենայ:

Հեռագիրը որ մեզ ներշնչեց այս քանի
մը տողերը գրելու, չենք կարծեր որ ասկից
տարբեր տպաւորութիւն մը թողած ըլլայ ա-
մենուրեք ուր հանդիպի մեր ազգակիցներու
աչքին:

Դառն դէպքեր են ասոնք որոնք կուգան
կանցին անպաշտպան ու տառապեալ ժողո-
վուրդներու կեանքին մէջէն, ապագայի հա-
մար գիտակցութեան ու փորձառութեան հետք
մը թողով: չա՛տ սուղի նստած տխուր դա-
սեր, բայց թերեւս սահմանուած՝ փրկարար
ներգործութիւն մը ունենալու անոնց ճակա-
տագրին վրայ, այլ եւս զանազանել գիտնա-
լու համար ճշմարիտ մարդասիրութիւնը պօղ-
եալ ետախարութեան:

ԿՆՈՋԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԷԼԻՆԷ ԱՐ ՆԻՆԻ

Ninon, Ninon, que fait-tu de la vie?
A. de Musset

Այն պահուն ուր գրիչս ձեռք կառնեմ քեզի
գրելու համար, Նինի, աչքիս առջեւ ունիմ ֆրանսե-
րէն հատոր մը՝ Avant l'amour, որուն հեղինակուհին
է Տիկին Մարսէլ Թինէր:

Գուրտիկ, հիմա ի՞նչ օճով մը այդ ֆրանսուհին իր
գրքին մէջ կը բանայ իր սիրտը, թափանցել կուտայ
քեզի իր գգացումներուն ամեն մէկ ծալքին մէջ, հոգիին
ամեն գաղտնիքները մէջտեղ կը դնէ՝ առանց սեթմեթի,
առանց քաշուելու եւ անկեղծութեամբ մը որ պարզա-
պէս հիւսնալի է:

Կեղծ պարկեշտութիւնը եւ ձեւական ամօթխա-
ծութիւնը մոռ չեն գտած այդ երեք հարկերէջերուն
մէջ եւ Տիկին Մարսէլ Թինէր իր աղջիկ եղած ատեն-

ուան պատմութիւնը քեզ կընէ այնպիսի մանրամաս-
նութիւններով որ կարծես մեզ լալուանի պահանջի ան-
ցեալը կը պատմէ կոր հրկանք, չորս պատին գաղտնա-
պահութեան մէջ:

Այդ էջերուն մէջ թափանցի՛, Նինի, հոգիովդ
կարդա, ուսումնասիրէ, ամփոփ ու շարժութիւն մը գիր
ընթերցումովդ մէջ եւ պիտի ճանչնաս ֆրանսուհին իր
տառնչորայն քսան տարեկան եղած ատենը, որոշ,
որոշ շատ գաղափարով պիտի ունենաս անոր կեանքին,
սրտին, գգացումներուն եւ ապրելու եղանակին վրայ:

Տիկին Թինէրի գիրքը առաջինը չէ իր տեսակին
մէջ եւ եթէ անոր վրայ կը խօսիմ քեզի, պատճառն այն
է որ Բարիդեան վերջին հրատարակութիւններուն մէջ
կը գտնեմ զայն եւ հեղինակուհին յատ յարգուած կին
մըն է, երեք դաւիկ տէր այսօր, եւ որուն տնայեւրին ու
ներկային սպիտակ պայծառութեան վրայ եւ ոչ իսկ
փոքր բիծ մը կարելի է գտնել:

Գրքին եւ կամ զայն գրողին ռեկլամ մը ընել չէ
միտքս, Նինի, հապա անոր ընթերցումէն կրած տպա-
ւորութիւններէն քեզի փոխանցել, իրրեւ երկուքս ալ հա-
յուհիներ, փորձել օգուտ մը քաղել անոր պարունակ-
կութենէն եւ եթէ երեք կրկնէր անոր միտքը թա-
փանցել, հաղորդենք մեր զգայածը մեր քոյրերուն,
որոնց հայուհի ըլլալին պատճառ մը չէ որ իրենց գո-
յութեան իրաւունքը ուրախուի, չի ճանցուն անոնք եւ
չի մեղքոյն ատոնկ կեանքի մութ վարագոյրին ետեւ
միտքած ըլլալուն համար:

Եթէ մինչեւ այսօր, պաշտելի բարեկամուհիս, մեր
ոեռը նկատուած է իրրեւ ամուսնութեան եւ բազմա-
մարդութեան մեքենայ մը, եւ չէ տրուած իրեն՝ ազա-
տագրութեան հիւսկական գաղափարն իսկ, ներելի չէ
եղած ինծի եւ քեզի պէտքերուն մոտեւելու, զգալու,
սիրելու յատուկ եղանակ մը ունենալ, պատճառն այն
է որ մեր չենք կրցած մեր դատը պաշտպանել, բոլոր-
քեզ չենք համարձակած այն բռնաբարութիւններուն դէմ
որոնք մեր էրիկ մարդիկը մեր սեռը կը նսեմացնեն
որուն թէեւ գեղեցիկ ըլլալը կը խոստովանին, բայց
միեւնոյն ատեն կօգտուին անոր զգալ ըլլալին:

Եթէ մենք ալ, եւրոպայի որեւէ ազգի մը աղջիկ-
ներուն պէս, մեր զգայածը եւ մեզի դէմ եղած անի-
րաւութիւնները թղթին եւ գրչին յանձնած ըլլայինք,
օ՛հ, ապահով եղիր որ մեր զգալ տեղը — ի՞նչ սքանչելի
ածական — աւելի լաւ պիտի ճանչնար զմեզ, շատ ա-
ւելի պիտի յարգէր եւ պիտի համոզուէր թէ արեւին
լայն ճառագայթներուն տակ մենք ալ իրաւունք ունինք
մեր հասկցած կերպով սիրելու եւ մեր ըմբռնած կերպով
ապրելու եղանակ մը փնտել մեզի:

Բայց չէ, լուրջեան մէջ թաղուած, նախապա-
շարժի շղթաներով կաշկանդուած, թող տուած
ենք որ զմեզ անգիտանան, ի՞նչ ուզելին չի հա-
կընան եւ չի տան մեզի ընկերութեան մէջ այն տեղը
որուն իրաւունք ունինք:

Կա՞յ մեր մէջ, ըսէ՛ Նինի, աղւոր Նինիս, աղ-
ջիկ մը որ համարձակած կամ աւելի ճիշդը ըսելու
համար, մոռածա՞ծ ըլլայ տեսութիւն մը մէջ ամփոփել
իր ըմբռնումները եւ կամ՝ զգայածները այն օրէն
սկսեալ որ ամուսնանալու վիճակին մէջ կը գտնուի
մինչեւ այն օրը ուր օրիորդ ըլլալէ դադարելով տիկին
կը դառնայ: Ոչ որ:

Առանց քաշուելու ըսէ՛ տեսներ, Նինի — բու եւ
իմ մէջս գաղտնիք ըլլալու չէ — յունիս քաղցր, շատ
բաղցր յիշատակներ պահած այն օրերէն ուր կը սի-

բէր, առանց գիտնալու սակայն թէ ինչէն սէրը:
Տասնըջորսէն քսան տարու եղած առնող գե-
ղածուի մագերով աննենգ խոշոր աչերով որոնք
իրենց անմեղ նայուածքով ամեն բան տեսնել կու-
գէին, չարածնի հետաքրքրութիւններով համակուած
աղջիկ մըն էիր անշուշտ:

Ամենէն պզտիկ միջադէպներէն այդ քու աղ-
ւոր աչերով կարցունքոտէին և դեռ աննշմարելի
կուրծքով, վիրաւորուած ճնշողութիւն մը սրտին պէս,
պզտիկ, սիրուն բարակուածներ կուեննար, ամանի չէ՞:

Դեռաւորս պիտեմով պատանիի մը մէկ պար-
տիկ ժպիտը գեղգ տակն ու վրայ կընէր և վաղոցին
մէջ ետիւղ դառնալ չէիր համարձակեր, գիտնալով
հանգերձ թէ գեղեցկութենէդ հրապուրուած երի-
տասարդ մը քեզ կը հետեւի հաւատարիմ շուն մը
պէս:

Եւ կամ չէ՞ եղած որ, ձեռքի սեղմումի մը հետե-
ւանք, դողեր բռնած ըլլան քեզի, և ամբողջ գիշերը
աչքը քուն չէ մտած՝ մարմնով տարօրինակ ջերմու-
թենէն: Տասնըութ տարեկան եղած առնող կը յի-
շե՞ս պղտորոտիւն սէրի մը խենդի մը պէս փարած
ըլլալդ, որ քեզի ըսել կուտար յարեկամութիւններով
«Ձեռ գիտեր հոգիս, որքան կը սիրեմ կոր, ամեն
վայրկեան աչքիս առջեւ է, անոր վրայ կը մտածեմ
գիշեր ու ցերէկ», — Պատշգամիւ վաղակարմիր կըր-
թնած արեգք որքա՞ն սպասած ես քու կիներդ անց-
նելուն, չիտակ ըսէ՞, այդ օրերէն առեցած՝ պզտիկ,
անուշադրոյ նմաններ դեռ չե՞ն գտնուիր քովդ,
գուրդուրանքով պահուած:

Հայելիի առջեւ — կը հասկնամ, ես ալ այդ ճամ-
բէն անցած եմ — քանի քանի ժամեր անցուցած ես,
ո՞վ գիտէ, իրեն հաճելի երեւնալու տենջանքը:

Բայց այս ամենը հինգած անցած բաներ են: Երբ
ճշմարտագէտ զգալու, հասկնալու, ճանչնալու տարի-
քին մէջն ես մտած, անծանօթ մը հաւնած է հասակիդ,
աչերովդ ու սիրածովդ բարկութիւն և ձեռքդ խնդ-
րած է հօրմէջ, ընդունած ես, Նինի, ինչպէս սիրած ես
երբեմն, առանց գիտնալու թէ ինչ է սէրը:

Սակայն գոյութեանդ, կեանքիդ ամենէն գեղեցիկ
պատասխան է որ այդպէս անցուցած ես քու տարի-
քիդ անխորժ ամբարշտութիւն մէջ, ոչ ոք կրցած է կալ-
դու սիրտդ, յագեցնել դեռատի տարիներով ան-
սահման հետաքրքրութիւնը, խորհրդատու մը չես ու-
նեցած, նկարագիր մը չես կրցած կազմել, կամքը
պակասած է քեզէ, և անմեղունակ չէզոքութեանդ
մէջ ներած ես որ ուրիշները չինեն ճակատագիրդ,
պատրաստեն ապագայդ, և գործածեն սիրտդ իր
թէ իրենց ըլլալը:

Եւ այսպէս չպիտի ըլլար, Նինի, եթէ դուն, ես,
ուրիշները բիշ մը ինքզինքնիս ցուցանէինք գրական
հրապարակին վրայ:

Երբ մենք զմեզ չենք ճանչններ, իրաւունք չու-
նինք պահանջներ. որ էրիկ մարդիկ զմեզ ճանչնան
ինչպէս պէտք էր որ ճանչնային:

Ա՛յ կարգաւ այժմեան գրագիտութիւններու «Մա-
ղիկ, ի կամ՝ Մարիս, ի մէջ գրածները: Անոնք կամ
վարժապետի վրայ կը գրեն և կամ ծաղիկի, լուսինը
անհանգիստ կընեն իր դանդաղ ընթացքին մէջ,
արեւին չեն հաւնիր, աստղերը համբուլ կըլեն, սո-
խակին գործին կը խառնուին, երկնքի կապոյտը բաւա-
կան քայ չեն գտներ, ուսումնական խորհրդին հետ կը
վիճարանին և վեց հարիւր տողով Մօսա պուռնին կեր-
գեն, Մօսան՝ որ հեռուէն եղած է Եւրոպայի պարբերա-
կան անձնասպանութիւններէն ի վեր:

Այո՛, այս ամենը կը գրեն, բայց տող մը չես
գտներ կանայի զգայունները նկարագրող, բացատրող
անոնց իտէալը, թարգմանող անոնց զգայունները:

Բառին բուն նշանակութեամբ կանացի գրական
նութիւնն է որ կը պակսի մեզի և ասոր հետք է որ
քեզ կը զիմեմ, անուշիկ Նինիս, գիտնալով որ կարող
ես, եթէ ոչ ուրիշներ, գոնէ քու ինքնութիւնդ ներկա
յայտնել մեր զօրաւոր սեռին:

Գրէ՛ ինչ որ կը մտածես, պահանջէ՛ ինչ որ ար-
դար կը գտնես և հաւատա որ մեծ ծառայութիւն պի-
տի մատուցանես քու պատկանած սեռիդ և կասկածիլ
կարելի չէ, շատ մը հետեւորդներ պիտի գտնես քեզի
ինձի սկսելով:

Ժամանակն է որ յեղաշրջում մը առաջ գայ
մեր սեռի կացութեան մէջ: Պարկէշտօրէն, խելքով
և կամքով աշխատինք ու պիտի յաղթենք:

Պէտք է որ դադրինք ըլլալէ այն տեսական կա-
րաւոր որուն վրայի փոշին կանանի մերթ ընդ մերթ
մեր էրիկ մարդիկ... իրենց շրթներով:

Պիտի գրես, ամանի չէ՞, Նինի, եթէ կաշառք
կախորժիս, կանխաւ մէկ միլիոն պաշտի կը գրկեմ
քեզի:

ՄԵԼԻՆԷ

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

Յայտարարում մեր երկու Այծմէնքիս-
ներն ալ մահագոյծեալու նուիրելու իստու
հարկին մէջ կը գտնուին:

Կովկասեան վերջին Սորհանդակը մեզ
կը քերէ Տ. Երեմիա արքայականութեան Գա-
ղասեանի մահուան յորը Ս. Էջմիածնէ:
Հանգուցեալ Սրբազանը Մայր Աթոռի գոր-
ծօն, ուղղամիտ ու սիրուած եկեղեցական-
ներէն էր. Մակար Կաթողիկոսի վախճա-
նումէն ետք, իրեն առաջ անդամ Սիւնոյի,
սահմանելով տեղակայութեան կարեւոր պաշ-
տօնը, այդ միջոցին ցոյց տուաւ վարչական
այնպիսի կարողութիւն ու այնպիսի յա-
կոթիւններ «որ հայ հասարակութիւնը չէր
էջ երեւակայել, ինչպէս կը գրէ Մշակ, վա-
նի պատերի մէջ մեծացած ու շատ անհոյս
կրթութիւն առած այդ մարդոց»:

Արդարեւ, Երեմիա արքայականութեան կը
պատկանէր մեր բարձրաստիճան կղերի այն
դասակարգին, որուն իսկարները կանխե-
սանաւ հեզգիւտէ, որ յեղափոխութեան ու
նոյն դասակարգութեան չէ որ կը փայլի,
այլ բնածին bon sensով մը, սրամտութեամբ,
հեռանկարներով, եւ մանաւանդ անկեղծ
ազգասիրութեամբ ու կրօնասիրութեամբ,
գերազանցապէս բարձր շատ մը ստացական
ձիրքերէ:

1891էն 1893, մինչեւ Վեհափառ Խը-
րիւնեան Հայրիկի ժամանումն ու հայրապե-
տական գահը բազմիլը, Երեմիա արքայա-
կանութեան օրինակելի կերպով ու եռանդուն հո-
գածութեամբ վարեց Ս. Էջմիածնի գործերը:

Իր դէմ ալ սակայն, ինչպէս ամեն
պարկէշ մարդ, ամեն պարկէշ եկեղե-
ցականի դէմ, հակառակութիւններ, մեղեմա-
յոթիւններ անպակաս եղած էին՝ ջրասելու
համար իր գործունէութիւնը:

Հազիւ վաքսուն տարեկան կար Երեմիա
Սրբազան, մարմնապէս առողջ ու բարե-
կազմ: Երեմիայի հիւանդութենէն մը ետք ա-
ւանդեր է հոգին:

Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ ըզ-
գալի պակաս մը կը թողու իր մահ որ առաջ
կը պատճառէ հայ հոգեւորականութեան
ընդհանրապէս:

Ամեն կողմէ ցաւակցական հեռագրեր
ուղղուած են Վեհափառ Կաթողիկոսին որ
խորապէս զգածեալ ըլլալու է այսպիսի ար-
ժանաւոր սիւնօղականէ մը զրկուելուն:

Օ Ր Ո Ւ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ռուսերի նորագոյն հեռագիր մը կըսէ
թէ Պոլսոյ դեսպանները տակաւին չեն տուած
այն ծանուցագրեր որոնցմով հատուցում պի-
տի պահանջներ Անատոլիոյ և Կ. Պոլսոյ շփո-
թութիւններու միջոցին իրենց հպատակնե-
րու կրած վնասներուն: Դեսպանները խոր-
հրդակցութեան մէջ են համիմաստ ձեւ մը
տալու համար իրենց ծանուցագրերուն:

— Սոֆիայէ առնուած լուրերու նայելով,
նախարարական տագնապ մը հաւանական կե-
րելի՝ Ֆէրիտիանտ իշխանին և Պ. Սթոյիլովի
միջեւ ծագած վեճի մը պատճառով: Իշխանը

հրամայեր է եղեր ձեռքաւարել Կապուովքի ե-
րեսիլիսանը որ ազգ. ժողովին մէջ քննադա-
տած էր զինքը՝ Կ. Պոլիս գացած միջոցին Սուլ-
թանին առջեւ ունեցած վարմունքին համար
ինչպէս նաեւ Պուլկարիա ապստամբած հայ
գաղթականներուն նկատմամբ ձեռք առնուած
խստութիւններուն համար: Նախարարական
հակառակներ է այս ձեռքաւարման:

— Սլաւոնիոյ մէջ ծագած ապստամբու-
թիւնը ծանր կերպարանք առնելու վրայ է:
Իբեքի, Բրիգրէնտի ու Բրիգրէնայի ալպան-
իացիները զէնք առած են ու շարժումը կը
տարածուի դէպի հարաւային գաւառները:
Դրիստինայ ալպանիացիներ ամենուրեք կը
միանան իսլամներուն: Ապստամբութեան պա-
րագլուխն է Մուլա Ջէլա անուն առնալուտը
որ մեծ ազդեցութիւն ունի երկրին մէջ: Ա-
պստամբները խզեր են հեռագրական թելերը:

Վեց հազար թուրք զինուորներ Գօսովա-
յէն Իփեքի վրայ կը քաշեն, շարժման առաջըն
առնելու և զայն կեդրոնացնելու համար. սա-
կայն ձմրան ոստակութեան և ձաւթաններուն
յոռի վիճակին պատճառաւ այդ զօրաց յա-
ռաջխաղացութիւնը տաժանելի ու դանդաղ
կը դառնայ: Ասկից զատ, սնունդի պակա-
սութենէ կը նեղուին:

Նորագոյն լուրերու նայելով, ընդհարում
մը տեղի ունեցեր է Սելանիկէն, Մանասթը-
րէն և Իսկիւպէն զրկուած զօրքերուն ու ա-
պստամբներուն միջեւ, Տիարովայի մօտերը:
Երկու կողմէ ալ ծանր կորուստներ:

— Պէրլինէ Սրանսարսին ուղղուած հե-
ռագրի մը նայելով, Տէրութիւնները համա-
ձայնած կերեւին Կրէտէի կառավարիչ անուա-
նել տալու համար Պաթեմպէրի Փրանձ Եօսէֆ
իշխանը: Սակայն Կ. Պոլսէն ալ կը հաղորդեն
թէ նոյեմբեր 24ին տեղի ունեցած դեսպա-
նական գումարման մը մէջ Ռուսիոյ ներկայա-
ցուցիչը կարծիք յայտնեց է թէ կղզիին կա-
ռավարիչը յունագաւառն ըլլալու է:

Իսկ Տէյրի Նիզ կը ծանուցանէ թէ Սուլ-
թանը պատրաստ է ինքնօրինութիւն տալ Կրէ-
տէի, հետեւեալ երեք պայմաններով:

1. Կառավարիչը Սուլթանին կողմէ ան-
ուանուի:
 2. Օսմ. զօրքերը մնայուն կերպով պահ-
ուին կղզիին մէջ:
 3. Օսմ. զօրքը ծածանի կղզիին վրայ:
- Ինչպէս կը տեսնուի, եւրոպական դիւա-
նագիտութեան ձեռնարկներն ու օտար նա-
ւատորմիւններու ներկայութիւնը կղզիին շուրջը՝
անդոր եղած են մազի չափ իսկ չեղեցունել
տալ թուրքիւն իր պայմաններէն:

— Թան աւելորդ յոգնութիւն մը կը
ստանան ձեռքները համար Տէյրի Նիզի այն
լուրը իբր թէ տէրութիւնները կը խորհին նա-
ւային ցոյց մը ընել Տարտանէի առջեւ կամ
նոյն իսկ Կ. Պոլիսը պաշարել, եթէ Սուլթա-
նը չի համակերպի Կրէտէի ինքնօրինութեան:
Ընդհակառակը դահիճները կը շարունակեն
եղեր, — ինչպէս ամեն հասարակ մահկանա-
ցու ալ կընար գուշակել, — խաղաղասիրական
եղք մը գտնել, մինչեւ ցարդ տակաւին բան
մը որոշուած չէ եղեր, բանակցութիւնները
կը շարունակուին եղեր, և այլն, և այլն. յաւի-
տենական յանկերգը, անփոփոխ ու միօրինակ:
— Կ. Պոլսոյ ռուսական նախորդ դեսպան

Պ. Նէլիտօֆ, որ Հռոմ փոխադրուած է, իր նոր պաշտօնատեղին հասեր է նոյեմ. 23ին : Իսկ իր յաջորդը, Պ. Զինովիէֆ, Կ. Պոլիս կը սպասուի շարժումս մէջ :

—Պանք Օթօմանի նորընտիր ընդհ. տնօրէն Պ. Համիլթըն Լանկ, նախկին քննիչ եգիպտոսի Տայրա-Սանիային, իր պաշտօնի գլուխն անցեր է ի Կ. Պոլիս :

—Կ. Պոլսէն կը հաղորդեն թէ դեսպանները յաջորդաբար քանի մը գումարումներ ունեցեր են խորհելու համար թէ ի՞նչ միջոցներով կրնան արգիլել կարգ մը դէպքերու կրկնումը, մասնաւորապէս օտար նամակատանց պայուսակներուն բռնաբարումը, ինչպէս վերջերս պատահեր է ֆրանսական ու անգլիական պայուսակներուն :

—Հայտնութեան վերջնական պայմանագրին կնքման մասին առաջ եկած յայտարարումը կը վերադուրի կարծեաց անհամաձայնութեան մը որ ծագեր է երկու կողման պատուիրակներուն միջեւ ի Կ. Պոլիս և որ կը վերաբերի վաճառականութեան ու նաւարկութեան թուրք պատուիրակները կը պնդեն թէ պատերազմին հետեւանք չնշուած է առեւտրական արդի դաշնագիրը : Իսկ յոյները պատասխանելով թէ առժամապէս դադարած է միայն, կը խնդրեն որ ճշդութիւն թէ օսմ. հողին վրայ ու ջուրերուն մէջ հելլէն վաճառականութիւնն ու նաւարկութիւնն ի՞նչ պայմաններով պէտք է կատարուին մինչև նոր դաշնագրի մը կնքումը : Պատուիրակներն հրահանգ խնդրած են իրենց կառավարութիւններէն :

—Սենդ ձէյմս Կադէթ արձագանգ կուտայ այն լուրին, որ յիշուեցաւ ասկից առաջ, թէ Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆիլիք Բըրրի պիտի հրաժարի իր պաշտօնէն :

—Բոսօլիէի մասնաւոր տեղեկութեանց նայելով, Սուլթանը վերջ ի վերջոյ արտօնութիւն չէ տուեր պալատան գաղտնի ոտտիկանութեան պետ Ահմէտ ձէլալէտօին փաշային՝ դաւ քանի մը շաբաթ անցունել ի Գահիրէ, ինչպէս ծանուցուեցաւ ասկից առաջ :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ա. Զ. Դ.

Ի գիտութիւն ազգային պաշտօնական մարմնոց և լրատվարչութեան, կը ծանուցուի թէ Առաջ. նորդարանի տնօրէնութեամբ՝ վաղը, կիրակի, 5 դեկտեմբեր (Ն. Տ.) քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Ս. Պատարագի աւարտումէն յետոյ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝ գաւառիս ընդհանուր ժողովոյ դեր-ատենապետ վախճանեալ Միհրան էֆէնտի Մէլիքեանի համար :

Կնիք Առաջնորդարանի

Գահիրէ 22/4 դեկտեմբեր 1897:

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիվը, եղբայրը՝ Բուէնս Մուհամմէտ Ալի ու Բարձր. Մայր-խտիվուհին չորեքշաբթի իրիկուն յատուկ կառախումբով Աղեքսանդրիայէն Գահիրէ եկան : Հինգշաբթի առաւօտ Խտիվը Ապտինի պալատն երթալով՝ նախագահեց նախարարաց խորհրդոյ նիստին : Ն. Բարձրութիւն մտադիր է այս իրիկուն Մոնթազան վերադառնալ :

—Լորտ Գրոմըր հինգշաբթի օրը տեսակցութիւն մը ունեցաւ նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի հետ :

—Պօղոս փաշա Նուպար քանի մը պաշտօնատարներով ամսոյս 12ին Բէնէհ (Վերին եգիպտոս) պիտի երթայ, ի դիմաց եգիպտական երկաթուղեաց վարչութեան կատարելու համար Բէնէհէն Ասուան շինուած գծին ըստանձնումը, որուն միջոցաւ Աղեքսանդրիայէն մինչև Ասուան ուղղակի հաղորդակցութիւն կը հաստատուի :

—Նախարարաց խորհուրդը 2200 ոսկիի վարկ մը քուէարկեց բանտարկեալներու անուն գիծալքին համար, և 2000 ոսկիի վարկ մը՝ խառն դատարաններու դիւանատանց մէջ օրականով աշխատող գրաւորներուն համար :

—Վերջին նոյեմբեր ամսուան միջոցին Աղեքսանդրիոյ մաքսատան ծխախոտի ու թէմպէքիի հասոյթն եղած է 92,262 ոսկի. նախորդ տարուան միեւնոյն ամսուան հասոյթն եղած էր 93,791 ոսկի : Իսկ յունուար 1էն նոյեմ. 30, տասնըմէկ ամսուան հասոյթն եղած է 955,047 ոսկի, մինչ 1896ի միեւնոյն ժամանակամիջոցի հասոյթն էր 914,588 ոսկի. ուրեմն այս տարի 40,459 ոսկիի առաւելութիւն մը կայ :

—Բոսօլիէի մէջ կը կարգանք հետեւեալը որ աւելորդ է ըսել թէ քմածին լուրերու կարգին կը պատկանի .

«Անստորագիր նամակներ ուղղուած են այս օրերս եգիպտացի նախարարներուն՝ Ընկերութեան մը անունով որ ինքզինքը կանուանէ Փրկարար Հայրենեաց :

«Կերեւայ թէ այդ նամակներ մահ կը սպառնան Նոյին Վսեմութեան, եթէ մինչև չորս ամիս անգլիացիները չեղեն եգիպտոսէն ! . . » :

—Արեւելեան երկաթուղիներու դեկտեմբեր 1ի վիճակահանութեան մեծ պարգեւը շահած է 823,671 թիւը :

—Աղեքսանդրիայի վաճառականներու դասէն պատուիրակութիւն մը դիմած է Խառն դատարաններու վճարել ատենի նախագահին՝ խնդրելու համար որ այսուհետեւ տեղական թերթերու մէջ հրատարակուին անուններն այն անհատներուն՝ որոնք իրենց փոխանակագիրները ժամանակին չեն վճարեր և տեղի կուտան քորթէքթներու : Այս միջոցաւ կը կարծեն թէ ապագային անոնք աւելի փութկոտ պիտի գտնուին օրին վճարելու իրենց ստորագրած թուղթերը :

—Եգիպտական կառավարութեան 1898 տարւոյ պիւտճէն, զոր պատրաստած էր եւմտական խորհրդական Սըր Էլփին Բալլըր, վաւերացաւ նախարարաց խորհուրդէն : Մտից և ելից գլուխներու ընդհանուր գումարը հաւասարապէս կը հասնի 10,440,000 ոսկիի : Հասոյթը՝ նախորդ տարուանին բաղդատմամբ 205,000 ոսկիի առաւելութիւն մը ցոյց կուտայ : Միւսոց կողմը 145,000 ոսկի աւելցած է պատերազմական բաժնին վրայ և 20,000 ոսկի մէկ կողմ կը դրուի Սուլթանի վարչական ծախքերուն համար :

—Սէրտար Բիշնէր փաշա այսօր Սիւէզ կը վերադառնայ Մասովայէն :

—Ոստիկանութիւնը առջի օրը Մաթարի երկաթուղոյ գծին մօտերը մեռած

մարդ մը գտաւ զոր գիւղնուութեան ենթարկեց : Հաւանական է որ ոճիրի մը արդիւնք ըլլայ այդ մահ :

—Աղեքսանդրիոյ աւստրիական հիւպատոսարանի թարգմանին կինը՝ տիկին Նահաս Ապուհօմօսի մօտերը ագարակ մը կը բնակի : Շարժումս մէջ գիշեր մը գողեր մտնելով իր տունը, ննջանքեալին դուռը խորտակելու և առանց քաշուելու 260 ոսկին կողոպտել են իր ներկայութեանը : Յետոյ ամբողջ տունը պտտել են մահու սպառնալիքներով և արժէքաւոր նիւթեր փնտռելով :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՅՈՒՄ

Գահիրէ գտնուող հայ գերասանները միացան վերջապէս ու վաղը գիշեր, կիրակի, Շարա Ապտէլ Ազիզի եգիպտական թատրոնին մէջ պիտի ներկայացունեն

ԿԱՐՄԻ ԲՂԹԱՊԱՆԱԿԸ

Թատրերգութիւն վեց արարուածով ու զուեշտ մը : Գլխաւոր դերերն ստանձնած են Պ. Պ. Պէշեւան հայր և որդի, Պ. Ալէքսանեան, Պ. Շաւարշ, Օր. Ե. Զօպանեան, Տիկին Մառի Պէշեւան : Զափաւոր գիներ :

ՕՐԱՑՈՅՑ

1898 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փաւրա ողջ :

ՏՕՔԹՕՐ Կ. ԶԵՐԱՀԵԱՆ

Տօրթօր Կ. Զերահեան այս անգամ Գահիրէ հաստատուած ըլլալով, իրեն դիմող հիւանդները պիտի ընդունի իր բնակարանին մէջ ի Շարա Քլօթ-Պէյ թիւ 2 (մուտքը՝ Աթթէթ-Իւ-Կինէն) ամեն օր, բացի կիրակիներէ, առաւօտէն մինչև ժամը 3(Յ.Մ.) իսկ ժամը 3էն մինչև 5 կարելի է յինքը գտնել Արարատ դեղարանը ի Պէշե-Սուրէն, և 5էն 7 եօդ. սիքիէի վրայ Զարմաթի տը լա Պուրս դեղարանը : 1—8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Սիամի թագաւորը ճիշդ ժամանակին վերադարձաւ իր երկիրը : Պանքըքէն առնուած լուրերու նայելով, աւագակութեան ու ծովահնութեան դէպքեր, թէ՛ մայրաքաղաքին մէջ և թէ՛ Սիամական ծովեզերաց երկայնութեամբ, իրարու կը յաջորդեն անլուր յանդգնութեամբ : Գողերը սուներուն վրայ կը յարձակին եղեր ո՛չ թէ գաղտնաբար, այլ շահեր վառած, ազատ համարձակ : Պուտտա-յական մեհնաններն իսկ կը թալլուին, կը կողոպտուին եղեր :

—Պրանսայի նշանաւոր բժիշկներէն բոռֆէսոր Թառնիէ մեռաւ նախորդ շաբթուն ի Բարիզ, եօթանասուն տարեկան : Իր մասնագիտութիւնն էր կնախտաբուժութիւն և մանկաբարձութիւն : Բազմաթիւ աշակերտներ և աշակերտուհիներ հասուցած է՝ որոնք առաջնակարգ տղթոռներ ու դայեակներ են այսօր : 1872էն ի վեր կանդամակցէր բժշկական Ակադեմիին և հմտալից ուսումնասիրութիւններ հրատարակած է կնատաբուժութեան վրայ : «Մաթէոնիդէ» հիւանդանոցին բժշկապետն էր երկար տարիներէ ի վեր և իր ժողովրդականութիւնը ու համբաւը կը պարտի մասնաւորապէս այն նախազգուշական ու ապանելիչ միջոցներու գիւտին որով ծննդաբեր կանայք ու նորածիններ կազաւին մահէ :

—Նիւ-Եօրքէն կը հեռագրեն թէ Ամերիկացի խումբ մը միլիանտներն հրկիւն արձանագործին յանձնարարներ են՝ Մաք-Գիլլէյ

Նախագահին արձանը պատրաստել, համակ ոսկիէ: Բարիկի 1900ի Արուեստահանգէսին մէջ ի ցոյց պիտի դրուի այս արձան որուն համար գործածուելիք ոսկիին արժէքն է հինգ միլիոն տոլար:

—Պ. և տիկին Կլատտին անցեալ ուրբաթ Լոնտոնէն մեկնելով Քան (Ֆրանսա) գացեր են, որուն բարեխառն կլիմային տակ պիտի անցունեն ձմրան խտաշունչ եղանակը: Յոյն բանասէր մը, Եաննարիս, իր հեղինակած «հելլենական լեզուի պատմական քերականութիւն»ը զրկած ըլլալով Պ. Կլատտինի, «մեծ ծերունին» նամակ մը գրելով այս առթիւ կը յայտարարէ թէ հելլէն ազգի ապագային վրայ իր ունեցած հաւաքը խախտած չէ բնաւ այն դառն ու մեղապարտ եղանակին պատճառով որով վարուեցաւ յոյն ժողովուրդին հետ եւրոպական համաձայնութիւնը որ իրապէս «եւրոպական դաւադրութիւն» մը եղաւ:

—Գերմանիոյ խորհրդարանը բացուեցաւ այս երեքշաբթի: Վիլհելմ կայսրը իր բացման ճառը մեծագոյն մասով նուիրեց կայսրութեան նաւային զօրութիւնն աւելցունելու ծրագրին և չեղմ հրաւեր մը ուղղեց երեսփոխաններուն՝ քուէարկել զայն:

—Ֆրանսայի նախարարաց խորհուրդը մասնակի փոփոխում մը կրեց: Ծերակոյտը քննադատական բանաձեւ մը քուէարկած ըլլալով դատական նախարար Պ. Տարլանի ներկատմամբ, դատաւորի մը ապօրէն տեղադրման առթիւ, Պ. Տարլան հրաժարական տուաւ: Նախարարապետ Պ. Մէլին առժամապէս ստանձնեց դատական նախարարի պաշտօնն ալ:

—Աւստրիոյ նախարարութիւնը տապալեցաւ խորհրդարանին մէջ տեղի ունեցած հակահրէական ու հակադերմանական բռնութիւններուն ու պայքարներուն հետեւանօք: Նոր նախարարութիւնը կազմեց Պաուս ֆոն Կաուչ:

Այդ վեճեր ու պայքարներ խորհրդարանական շրջանակներէ դուրս ալ կը տարածուին ու ծանր համեմատութիւններ կառնեն երկրին մէջ: Հինգշաբթի օրը Վիէնայէն հեռագրեր հաղորդեցին թէ Բրակայի մէջ (Պոհէմիա) կռիւներ տեղի ունեցեր են գերմանացիներու և շեխերու միջեւ: Խուժանք ցոյցեր ըրեր է փողոցներուն մէջ, վաճառատուներ կողոպտելով ու պատուհաններ խորտակելով: Տասներկու վաշտ զինուոր կոչուեր է՝ բարեկարգութիւնը վերահաստատելու համար: Ձինուորները հարկադրուեր են զէնքի դիմել ցուցարարներուն դէմ որոնք կուգէին փամփուշտի գործարանին վրայ յարձակիլ: Հարիւրի չափ վիրաւորուած կայ և երկու մեռած: Յիսուն հօգի ձերբակալուեր են:

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԿԻԶԷԼԵԱՆ

Ա. Ղ. Ե. Ք. Ս. Ա. Ն. Գ. Ի. Ս.

Կը մատակարարէ ամեն Տեսակ ածուխ, մանաւանդ ՔԱՐԵՍԻ, անմրցելի զներով եւ գոհացուցիչ պայմաններով:

Դիմել ի Սիֆֆէ Կեսիսա եւ կամ Հայոց Եկեղեցին՝ Աղեփասնդիա: 2-5

Le Gérant: D. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի



ՃԵՐՄԱԿԵՂԵՆ ԵՒ ԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ ՇԱՄԱՐ
Գ Ո Ր Ծ Ա. Ծ Ե Յ Է Ք

ԼԵՍՍՈՒՎ ՏԻՒ ԺԵՆԻՆ

Ծախիլ եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքուր եւ կաւարդագործ ծուրիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակեղեններու եւ այլոց հակաճերմակ:

ԿԱՐԵՒՈՐ. ԼԵՍՈՒՎ ՏԻՒ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՆՆԵՐ

Եւրոպայ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆլիօ տարեկան սպառում. — Գործածութեան կետայր խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեղիպոս

Կ. Վ. Ե. ԿԱԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դանիք. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 15-24

ԺԱՄԱՅՈՅՑԻ ՊԵՏՔ ՈՒՆԻՔ



Դիմեցէ՛ք ՍԵԼՎԱՆ
ՃԵՆՆԻ Նորահաւտան միջերանցն ի եսն խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւաճիւր վեճակի մէջ: Սեւիկանեան վաճառատունն որ Պողոս չորսպարակի վրայ մեծ համբաւ մը կը վայելէր արդէն, իր ապրանայ ընտրութեամբ ու զնոց անմրցելի ածաւորութեամբ, վերջերս բոլորովին հոս փոխադրուած

ըլլալով Եգիպտոսի հասարակութիւնն եւս պիտի կրնայ մեծապէս օգտիլ այս առիթէն:

Այս շինքը շէնք համարիւր փոքրիկ գաղափար մը տալ մի բանի տեսակ ժամացոյցներու զնոց վրայ:

Նիքի, մեկ կողմն ապակի, կորէն լարուող 22 դե.ողջ

» » » » » » ուրիշ մեկ

» » » » » » Տեսակը 40 դե.ողջ

Նիքի, մեկ կողմն ապակի կորէն լարուող ոսկեպատ 50 դե.ողջ

» » » » » » Նիքի, երկու կողմն ապակի, կորէն լարուող 40 » »

» » » » » » ոսկեպատ 50 դե.ողջ

Արծաթ » » » » » » 70 » »

» » » » » » ոսկեպատ 80 դե.ողջ

» մեկ » » » » » » 75 » »

» » » » » » ոսկեպատ 85 դե.ողջ

Ոսկի, երկու կողմն » » » » » » 120 » »

» » » » » » տարբեր մեկ

» » » » » » Տեսակ 150 դե.ողջ

Ճոխ հաւաքածոյ ամեն տեսակ ոսկի ժամացոյցներու թէ կնոջ և թէ տղանց համար անմրցելի գնեցով: Աստուծոյ դատ կը գտնուի նաեւ ամեն ճաշակի և ամեն քրտակի յարմար արծաթ և նիքի ժամացոյցներ, շղթայք, և զոստրեզներ. ինչպէս նաեւ պատի և քոնսոլի բազմազան բանութիւններ:

Ամերիկեան ժամացոյցներէլ քոնսոլի և գրասեղանի յարմար:

Միմայն 10 դուրուս ողջ

որուն կանոնաւոր բանիւն երաշխաւորեալ է:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի Սեւիկանեան միջերանցն ի եսն խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւաճիւր վեճակի մէջ:

Եգիպտոսի ամեն կողմէ եղած յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 12-12

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1, 2 4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1, 2 4	Օմնիպ. և 1 2 3 4	
								Երեկ.	Երեկ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանիս	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1 2 4	Խառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էքսպրէս 1 2 4	Օմնիպ. և 1 2 3 4	
									Երեկ.	Երեկ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	—	—
Զակաղիկ	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»	—	7 5
	մեկ.	1 44	9 4		»	—	—
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Զակաղիկ	ժամ.	3 7	8 53
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա	մեկ.	3 17	9 3
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—		»	—	—